եկեղեցականների պատրաստության, նոր համայնքների հաստատման, նոր եկեղեցիների եւ համայնքային կենտրոնների կառուցման, ինչպես նաեւ ազգի հասարակական եւ մշակութային կյանքում քրիստոնեական արժեքների հաստատման ուղղությամբ:

Ձերդ Սրբություն, մեր մաղթանքն է առ Ամենակարողն Աստված, որ Սուրբ Գրիգոր Լուսավորչի բարեխոսությամբ մենք կարողանանք էլ ավելի հաստատուն կերպով ձգտել միության՝ քրիստոնեական հավատի, հույսի եւ սիրո սրբազան կապերով: Այս նշանակալի առիթով մաղթում ենք, որ հաղթական Աստծո օրհնությունն իջնի Ձերդ Սրբության վրա: Թող Հայր Աստծո սերը պարուրի Ձեզ, Որդու իմաստությունը լուսավորի եւ Սուրբ Հոգու կրակը ներշնչի Ձերդ Սրբությանը:

Առ Տերն մեր Հիսուս Քրիստոս եղբայրական սիրով ու մաղթանոք՝

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԶ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՆՁՆՎԵՑ ՌԴ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ

Նոյեմբերի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Վյաչեսլավ Կովալենկոյին:

Հանդիպման ընթացքում մեծարգո դեսպանը ջերմորեն շնորհավորեց Վեհափառ Հայրապետին գահակալության տասնամյակի առիթով եւ Նորին Սրբությանը հանձնեց Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդեւի շնորհավորական ուղերձը:

Ուղերձում մասնավորապես ասվում է. «Ռուսաստանում մեծ հարգանք են տածում Հայ Եկեղեցու հանդեպ, որը բազում հարյուրամյակներ շարունակ պահել է քրիստոնեական հավատը: Բարձր ենք գնահատում Ռուս Ուղղափառ եւ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիների միջեւ ձեւավորված բարի հարաբերությունները: Նրանք միշտ հատուկ դեր են ունեցել եւ ունեն մեր երկրների միջեւ բարեկամության ու վստահության ամրապնդման գործում: Դրա տեսանելի վկայությունն է Մոսկվայում կառուցվող հայկական տաճարը եւ ռուս ուղղափառ եկեղեցին՝ Հայաստանի Հանրապետության տարածքում: Դրանում, անկասկած, կա նաեւ Ձեր անձնական ավանդը՝ իբրեւ հեղինակավոր կրոնական գործիչ, ով մեծ ուշադրություն է հատկացնում ռուս-հայկական հումանիտար կապերին:

Դուք նշանակալի ներդրում ունեք նաեւ միջկրոնական երկխոսության ամրապնդման գործում: Վստահ ենք, որ Ձեր ջանքերը ԱՊՀ Միջկրոնական խորհրդի շրջանակներում, որի համահիմնադիրն է Հայ Առաքելական Եկեղեցին, կնպաստեն խաղաղության եւ կայունության ապահովմանը Հարավային Կովկասում»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խորին շնորհակալությունը հայտնեց ՌԴ Նախագահին շնորհավորական ջերմ ուղերձի համար՝ հաստատելով, որ Հայ Եկեղեցին, հավատարիմ երկու ժողովուրդների եւ Եկեղեցիների միջեւ առկա բազմադարյան ջերմ, եղբայրական հարաբերությունների ոգուն, պիտի շարունակի իր ջանքերը գործադրել երկու ժողովուրդների եւ երկրների միջեւ կապերի առավել ամրապնդման համար:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց Հայրապետական մաղթանք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության տասներորդ տարեդարձի առիթով:

Հանդիսավոր թափորը զանգերի ղողանջների ներքո Հայոց Հայրապետին առաջնորդեց Մայր Տաճար, ուր Իջման Սուրբ Սեղանի մոտ, հանդիսապետությամբ Նորին Սրբության եւ առընթերակայությամբ Երուսաղեմի Հայոց Պատրիարքության ներկայացուցիչ Տ. Արիս արքեպիսկոպոս Շիրվանյանի, Կ. Պոլսի Հայոց Պատրիարքության ներկայացուցիչ Տ. Շահան արքեպիսկոպոս Սվաճյանի, թեմական առաջնորդների եւ վանաբնակ եպիսկոպոսների, կատարվեց մաղթանքի արարողությունը: Եկեղեցականաց դասը եւ ներկա բարեպաշտ հայորդիներն աղոթք բարձրացրին առ Աստված՝ Ամենայն Հայոց Հայրապետության ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության ու պայծառության եւ Նորին Սրբության քաջառողջության, կենաց արեւշատության եւ բազմամյա գահակալության համար:

Հայրապետական մաղթանքի ավարտին հանուն եպիսկոպոսաց դասի եւ Մայր Աթոռի միաբանության Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետին շնորհավորական խոսքով դիմեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը: Սրբազանն իր խոսքում ասաց.

«Քեզ պարտ է բանաւոր հօտիդ վաստակել եւ
տքնել անդադար միշտ, եւ դողալ եւ հոգալ հանապազ,
եւ ջերմագութ գորովով առաւել քան զհայր գթած եւ
քան զմայր մատաղածին խնամել եւ սիրել,
եւ խնդրել ոգւոցն նոցա փրկութիւն, եւ հանապազ ուսուցանել
բանիւ վարդապետութեամբ, եւ որ առանձինն եւ որ ի մէջ ժողովրդոց»:

Այսպիսի պատվիրան է հնչեցնում կաթողիկոսացող յուրաքանչյուր անձի համար Սուրբ Հովհան Մանդակունի Հայրապետը: Այս պատվիրանին ականջալուր՝ Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսն արդեն տասը տարի իր ձեռքում ունի հայոց հայրապետներից ժառանգած հովվապետական գավազանը, որը